Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Q-84

Ասատիրյանց
891
ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՍՈՒՏ ՃԳՆԱՒՈՐ

Վ. ՕԹԷՎԻԼ. ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱ ՊՈՎ.

Հրատարակութիւն

ԱՃԻՒ ՇՈՒՇԱՆԻԿ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

800
252-ԱՐ

ԹԻՖԼԻԶ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1904

01 JAN 2009
19 NOV 2010
891.99
Ա-84
15228
1001
1008

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՍՈՒՏ ՃԳՆԱՒՈՐ

ՎՕԴԷՎԻԼ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Հրատարակուիլ

ԱՅՐԻ ՇՈՒՇԱՆԻԿ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ
Центральная Библиотека
С.С.С.Р.
7/II 1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՋ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1904

11 APR 2013

21680

Дозволено цензурою, Тифлисъ 16 Іюня 1903 г.

ՍՈՒՏ ՃԳՆԱՒՈՐ

ՎՕԳԵՎԻԼ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ։

ՄԱԿԻ, սուտ ճգնաւոր.
ՄԱՑԻԼ. բարեպաշտ տանտէր.
ՄԱՐԳԱՐ. նորա որդին.
ԹԱԳՈՒՇ. նորա աղջիկը.
ՓՐԷՑՏՈՒՄ, երաշտեաս.

Արարուած առաջին.

Մէջին կարգի տուն պարզ զարդարանքով.

1 Տեսիլ.

ՄԱՐԳԱՐ

Հայրիկ, ինչ կուզես ինձ ասա, այդպէս միշտ միամիտ ես, միամիտ։

ՄԱՑԻԼ

Ի նչպէս, հապա այս տունը, այս կալուածքը, դովլաթն ու ապրանքը դու ես աշխատել։

ՄԱՐԳԱՐ

Աչքս բաց եմ արել, քեզ աշխատելիս եմ տեսել, ամենքն էլ գիտեն, որ դու աշխատաւոր ես, Աստուած տուել է հիմի էլ ունիս. ես խօ էդ չեմ ասում։

ՄԱՑԻԼ

Բա ո՞ր։

ՄԱՐԳԱՐ

Մարդի չես կարում ճանաչել։

ՄԱՑԻԼ

Որդի, մարդ ճանաչելը հեշտ չի, 100 աղաքար որ ուտես մի մարդի հետ, էլի չես կարող ճանաչել։

ՄԱՐԳԱՐ

Ո՞վ ասեց, հիմի ես այդ սուտ ճգնաւորին չեմ ճանաչում. ինչ մարդ է, նրա մեր տուն գալը խօ երկու շաբաթ չկայ, համա գիտեմ որ նա սուտ ճգնաւոր է, քեզ խաբում է, հացի թանգ տարի է, գլուխը եօլա է տանում մեր տանը։

ՄԱՑԻԼ

Սուս, նրա անունը մի տալ, դու դեռ ջահել ես, ինչ գիտես գրոց բանը, մի մարդ որ եօթը տարի ճգնաւորութիւն անի, նա տես մարդ կլինի. (*տեղից կանգնելով*).

ՄԱՐԳԱՐ

Ո՞վ տեսաւ նրան քարափումը ճգնելիս. հենց որ մօտիդ Սաղմոսիցը խօսքեր է ասում,

հենց գիտես թէ սուրբ է։ Մի Աւետենց Յակոբին հարցրու, տես ինչ է ասում է. հենց որ էստեղից դուրս է գնում՝ թուշ աղբրի կողմն է գնում, ինչա՞ որ այնտեղ հարսներ շատ կան։

ՄԱՑԻԼ

Սուս, սուս, փուչ կենդանի, գնա՛ դուրս, գնա կորի՛ր անպիտան։

ՄԱՐԳԱՐ

Ես կ'գնամ, համա էդ սուտ ճգնաւորին տանիցը դուրս արա. թէ հիւր էր, թէ լաւութիւն էր, երկու շաբաթն էլ բաւական է։ Խալխը մեզ վրայ խօսում են, բամբասանքի տակ ենք ընկել։ Մեր տունը սուտ ճգնաւորենց տուն են ասում։

ՄԱՑԻԼ

Տօ, սուս է, քեզանից ստեր մի դուրս տալ, արդար մարդին սուտ ճգնաւոր ես ասում, Աստուած գլխիդ կբարկանայ. գնա՛ գործիդ կաց, գնա՛, իմ հաշիւներում դու մի խառնուիլ։

ՄԱՐԳԱՐ

Լաւ, ես անպարտ լինիմ (*գնում է*)։

2 ՏԵՍԻԼ.

ՄԱՑԻԼ

(*Ինքն իրան*) Եղբայր, ես այդ մարդի մէջ ոչինչ չար բան չեմ տեսնում, միշտ աղօթքը

բերնին, տէր ողորմէն ձեռքին, կրօնաւորի շորերում փաթաթուած՝ աշխարհի համար բարի է ցանկանում։ Ինձ էլ հենց էդպէս մի մարդ էր հարկաւոր, որ ուտի, խմի իմ տանը, մեզ համար, աշխարքի համար աղօթք անի, մնասն ինչ է. այստեղի ժողովուրդը, տէրտէրները որ խելք ունենան, այդ բարի մարդին եկեղեցու խցերումն տեղ կտան. այնտեղ մնայ՝ ու երկրի համար աղօթք անի. բայց ում կարաս հասկացնել. Թաթոս քեօխվայ, Մաթոս քեօխվայ. անիծուի էսպէս ժամանակը. էլ ով է տուել աշխարհս երեսին ճգնաւոր։ Հիմի իմ տղէն էլ ինձ ասում է մարդ չես ճանաչում. ինչ ասեմ, քէֆին դիպչում չեմ, մինուճարն ա, տո՜ես որ մարդ չճանաչեմ, կարող եմ էսպէս ապրուստ ունենալ։

3 Տեսիլ.

ՄԱԿԻ

(*Կամաց քայլերով մոտենալով*). Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի. . . .

ՄԱՑԻԼ

Համեցէք, համեցէք, հայր ճգնաւոր, ես հենց էս բօղէիս քեզ վերայ էի մտածում. այդ ոնրտեղ էիր։

ՄԱԿԻ

Այգիների ծառերի մօտ զբօսնում էի, հո-

ղեղէն, Տէր, ով կացցէ ի խորանի քում կամ ով. . . .

ՄԱՑԻԼ

Լաւ, նստիր, հանգստացիր, տնաշէն, իրիկուն առաւօտ աղօթք ես անում, բաւական է աշխարհին, հիմի էլ խօսի, ասա, մի քիչ սիրտդ բաց արա։

ՄԱԿԻ

(*Կեղծ ժպտով*) Իմ պարտքն է միշտ աղօթեմ, հրեշտակները (*երեսին խաչակնքելով*) ինձ այդպէս պատուիրեցին, երբոր անապատի ճգնութեան տեղից աշխարհ ուղարկեցին։ Եւ ասել, խօսել, ուրախանալու իրաւունք էլ չունիմ, ես ուրիշների պէս հասարակ մարդ չեմ. և երբոր ես ուրախանամ՝ իմ հոգին սատանաների ձեռքը կ՚ընկնի։ «Երանեալ է այր, որ ոչ գնաց. . . .»

ՄԱՑԻԼ

Հայր, ասում էիր թէ մի անգամ կ՚պատմեմ ճգնաւորութիւնս թէ ինչ էլաւ, հազիր պարապ եմ, դու էլ խօ բացի աղօթքը ուրիշ բան չունես, պատմիր մի տեսնենք, թէ ինչ է եղել քո ճգնութիւնը։

ՄԱԿԻ

Ո՞վ դու հողեղէն, կպատմեմ, միայն ուրիշի չասես, որ աշքիս երևոյթք կլինեն էն օրհնուածները. Տէր մի համարիր զայս մեղս։

Քսան և հինգ տարեկան տղա էի, համա աշխարհի խէրն ու շառը չէի գիտում։ Իրիկուն առաւօտ գնում էի ժամ տիրացութիւն անում. մի անգամ երբ որ տաճարի խորանում. ժամաշապիկս հագնում էի.—Տէր ով կացցէ ի խորանի քում կամ ով բնակեսցէ ի յարկի սրբութեան քոյ—Գաբրիէլ հրեշտակապետը (Խաչակնքելով) իր լուսաթաթախ թևերը առաջիս փռեց ու հրամայեց, որ նստեմ վրէն, նստեցի ու դուրս տարաւ.—Տէր հան ի բանտէ զանձն իմ.—աչքս բաց արի, տեսայ որ էլ ոչ մարդիկ կան, ոչ ժամ, ոչ ժամատեղ, ոչ տներ, հրեշտակը առաջիս կանգնած մի քարաւիի տակին ցոյց էր տալիս թէ՝ ահա քո տեղն այն այրն է.—«Եղից Տէր զիս ի դրի ներքնումն ի խաւարի»—այնտեղ ասաց, այսուհետև ճգնաւորութիւն կանես, Աստուած քեզ համար մանանայ կուղարկէ։ Այն քարափում ուղիղ, ուղիղ եօթն տարի մնացի ես. վեց տարի մանանայ էի ստանում հրեշտակի ձեռքով, մէկ տարի էլ երկու վայրի այծեր իրիկուն առաւօտ գալիս էին կուրծը կաթով լիքը, կթում էի կթում ու կաթը խմում.—«Ի վայրի դալարուոջ անդ բնակեցայց զիս և առ ջուրս հանգստեան սնոյց զիս. . . . .»—այսպէս հոգեղէն եղբայր, ապրում էի աշխարհի համար ծունր դնելով, աղօթք անելով

և արտասունք թափելով. իմ ուտելիքն այդ էր, իսկ հագնելիքս ահա (Խոռջինից հանում է ցոյց տալիս) այս վայրի բրդից քուրքը՝ որ իմ ձեռքովս եմ կարել հրեշտակի հրամանով, իսկ այս գրեանքը, տեսնում ես, հոգեղէն եղբայր, սուրբ են և ստացել եմ երկնքի հրեշտակներից։ (Համբուրում է եռ Մայիշն էլ) Ձեռք չտաք հոգեղէն եղբայր էս խուրջինին՝ եթէ ոչ մեծ վնաս կստանաք։—«Մի մերձեսցէ ի սա ձեռք մեղաւորաց»—(Խոռջինը փաթթում է քուռնջը դնում). Եօթն տարին որ լրացաւ, հրեշտակը եկաւ իր լուսաթաթախ թևերը բաց արեց առաջիս. ես նստեցի, էլ չիմացայ թէ ո՞ւր է տանում. աչքս բաց արի, տեսայ ձեր օրհնեալ դրանն եմ կանգնած. և լսեցի հրեշտակի խօսքը, որ ասում էր. մտիր այս տունը, նրանք քեզ կընդունեն, միշտ աղօթք արա, մինչև որ ես կգամ մի ուրիշ տեղ կտանեմ.—Մտից ի տուն քոյ, երկրպագից ի տաճար սուրբ քոյ. . .»—լսեցիր, հոգեղէն եղբայր, այսպէս է եղել իմ ճգնաւորութիւնս. այժմ ես սպասում եմ սուրբ հրեշտակին—«Արաքեա Տէր զլոյս քո, զի հանցէ զիս ի հարկս սրբութեան քո»։—

ՄԱՑԻԼ

Լոյս ես, լոյս դառնաս հոգւով ու մարմնով. հրեշտակիդ զօրութիւնը լինի իմ տուն

ու տեղի և բոլոր աշխարհի վրայ։ Ճգնաւոր հազարից մինը էլ չիլինի էս ժամանակին։

ՄԱԿԻ

(*Ժպտալով*) Ի՞նչ ես հարց ու փորձ անում, հողեղէն եղբայր, էդ իրաւունքը քեզ չի տուած իմանալու, կայ յանապատի, չկայ յաշխարհի, կայ աշխարհի, չկայ յանապատի, լսել ես։

ՄԱՑԻԼ

Աստուած ոչ անէ, ես ինչ գիտեմ, որ այդ գիտենամ։

ՄԱԿԻ

Ուրեմն, գնա, հողեղէն եղբայր, գնա բանիդ կաց, ինչ ես հարց ու փորձ անում, մեղք աւելացնում։ «Տէր ամենակալ՝ Աստուած Աբրահամու. . . . .» —

(*Մայիլը գնում է*).

4 Տեսիլ

ՄԱԿԻ

Հա՛, ճգնաւորութիւնս լաւ է, մեր աշխարհի մարդիկը ինձ նմանին շատ են սիրում, լաւ էլ վարձատրում են։ Այս օրհնեալ Մայիլի մամոնայից մէկ կապուկ հազար մանէթ քցել եմ սուրբ խուրջինիս մէջը, դեռ նա բան չգիտէ. տեսէք որքան ա նա ինձ հաւատում։ Երկու շաբաթուայ մէջ հազար մանէթ ի հարկէ ինձ նմանին քիչ բան չէ. բայց դեռ շատ բան կայ

թոցնելու. (*գնում է դէպի արծաթեայ բաղիեն*) այս ևս թանկ կարժէ (*գնում է խուրջինը*) մուտ ընդ դուռն սուրբ խուրջինիս, և անշարժ եղիցի մինչ փախուստն սուրբ ճգնաւորիս ի տանէն յիմար Մայիլի. . . .

5 Տեսիլ

(*Մայիլը մտնում է*) Դա՛տ արա ինձ Աստուած ի դատաստանի քում։

ՄԱՑԻԼ

Հայր ճգնաւոր, դեռ աղօթք ես անում. օրհնուած, գնա այգիները զբօսնիր, այնտեղ թռչունների երգերը կլսես և աղօթք կանես։

ՄԱԿԻ

Բարի հողեղէն, ճանապարհին ինձ օրհնուած կանայք ու աղջկերք են պատահում, դժուար է այնտեղ։

ՄԱՑԻԼ

Ի՞նչպէս։

ՄԱԿԻ

Սուրբ հրեշտակն ինձ հրամայել է կեանքիս մէջ կանանց երես չտեսնեմ։ Ձեր թաշկինակը շնորհեցէք ինձ ուրեմն, որ այն օրհնուածները երբ երևան՝ երեսիս քող դցեմ.— «Հոյս տուր տէր աչաց իմոց զի մի երբէք. . .»։—

ՄԱՅԻԼ

Բա որ իմ տանը կին լիներ՝ դու ինչ կանեիր։

ՄԱԿԻ

Ձեր տունն իմ օթևանն է, շատ լաւ կլիներ որ լիներ, բայց որ չկայ՝ օրհնեալ է Աստուած։

ՄԱՅԻԼ

Ցամենայն ժամ, առ թաչկինակը հայր։

ՄԱԿԻ

(*Հոնեղով*)) Մի եկեսցէ ի վերայ իմ ոտք ամբարտաւանից. . . (*գնում է*)։

6 Տեսիլ.

ՄԱՅԻԼ

(*Ինքն իրան*) Եղբայր, արի ասենք որ սա լուսեղէն հրեշտակ է, ինչ կասես, տեսնում չես երեսն էլ ծածկում է կանանց տեսնելա, աղլուխս էլ ձեռքիցս առաւ՝ որ երեսը ծածկի. հիմի դու տես որ աղլուխս էլ սուրբ կլինի։ Ոտդ այս հանդին հանդաստանին վրայ դայ, ա՛յ սուրբ մարդ. աղօթքդ, բարեխօս լինի առ Աստուած։

7 Տեսիլ.

Մտնում է մի միջահասակ ծերունի, դեռ դռնից ողջոյն։

ՓՐԷՑՏՈՒՄ

Բարի աջողում, ա՛յ Մայիլ.

ՄԱՅԻԼ

Աստուծու բարին, արի բարեկամ։

ՓՐԷՑՏՈՒՄ

Ո՞ւր գամ դադէն, թէ որ սրտինս պէտք ա կատարուի, տուն մտնեմ։ (*կանգնում է*)

ՄԱՅԻԼ

Աստուծով, արի, ա՛սա, ...

ՓՐԷՑՏՈՒՄ

(*գալով*) Մայիլ ջան, երազ եմ տեսել, երազ. . . .

ՄԱՅԻԼ

Աստուած խէրը վրաբերի։

ՓՐԷՑՏՈՒՄ

Մի ասա, դրուստ ա թէ սուտ։

ՄԱՅԻԼ

Ի՞նչ, իմ տղի հուջաթ խօսքը։

ՓՐԷՑՏՈՒՄ

Չէ ա՛. . . . ասում են Ձեր տան վարպետը զատ գիտի, դրուստ ա թէ սուտ։

ՄԱՅԻԼ

Բարեկամ, վարպետ չի։

ՓՐԷՑՏՈՒՄ

Բա ինչ ա, վարժապետ ա։

ՄԱՅԻԼ

Չէ։

ՓՐԷՑՏՈՒՄ

Ա՛ղբէր, բա ինչ, մլթօնի խօ չի։

ՄԱՅԻԼ

(*ծիծաղելով*) Հոգուդ խի՞ս մեղք անում,

Փրէյտում ջան։ Նստի հալա նստի, տեսնամ ի՞նչ երազ ես տեսել։

ՓՐԷՅՏՈՒՄ

Չէ, չեմ ասիլ մինչև չիմանամ թէ էդ մարդը կարմ մեկնել երազս։

ՄԱՅԻԼ

Ի՞նչ ես ասում, աշխարիցն սկի խաբար չես։ Էդ մարդը հոգւով ու մարմնով սուրբ ա. դա աշխարհի տակն ու գլուխը գիտի. դա գիշեր ու ցերեկ հրեշտակների հետ ա խօսում. երազը չի՞ կարող պատմել։

ՓՐԷՅՏՈՒՄ

Ես ի՞նչ գիտամ (*Ասռեչով*) հազար բան են ասում խեղճ մարդի վերայ։

ՄԱՅԻԼ

Է՜հ, լաւ մարդի վրայ հենց կխօսան, ամա դա խօ մարդ չի ապրէր, դա աշխարհ եկած ճգնաւոր ա, իմացար։

ՓՐԷՅՏՈՒՄ

Ասա սուրբ ա, էլի։

ՄԱՅԻԼ

Սուրբից էլ աւելի ա։

ՓՐԷՅՏՈՒՄ

Թէ՞ մեր տէրտէրի օրումն ա։

ՄԱՅԻԼ

Ի՞նչ տէրտէր, վարդապետ կամ եպիսկոպոս կարող ա դրան յաղթել, ի՞նչ ես ասում։

ՓՐԷՅՏՈՒՄ

Բա ուր ա հմի։

ՄԱՅԻԼ

Դուրս գնաց։ . . . ա՛յ գալիս ա. կանգնի Փրէյտում. փափախդ վեր կալ։

8 Տեսիլ.

ՄԱԿԻ

«Ի վերայ լիժից և քարրից գնասցես և առոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն»—Ողջոյն ձեզ, ո՛վ հոգեոյէն մարդիկ։

ԵՐԿՈՒՍՆ

(*Գլուխ եռն տուշիս։*)

ՄԱԿԻ

Ասացէք, ի՞նչ կայ այս չորս մթին պատերի մէջ։

ՄԱՅԻԼ

Հա՛յր ճգնաւոր, էս մարդը քու տեսութեանն է եկել, խնդիր ունի մօտդ։

ՄԱԿԻ

(*Շտռեչով*) Բարի լինի, ասա, ո՛վ հոգեղէն, ի՞նչպէս է այս մարմնաւոր աշխարհը։

ՓՐԷՅՏՈՒՄ

Մարմնաւոր աշխարքումը ցաւերի ու նեղութիւնների մէջ ենք. . .

ՄԱԿԻ

Ի՞նչ ա ձեր ցաւերը։

ՓՐԷՅՏՈՒՄ

Հենց էս սհաթին ասեմ, խալֆա ջան։

ՄԱՅԻԼ

(*Կորեղով*) Մեղք ա հոգուս, խալֆա մի ասիլ, հայր ճգնաւոր ասա։

ՓՐԷՑՏՈՒՄ

Հա, ճգնաւոր ջան, իմ ցաւն էն ա որ մի փիս երազ եմ տեսել, եարաբ ինչ ա։

ՄԱԿԻ

(*Ծպիտով*) Իմ լուսաթաթախ հրեշտակների կամքով կասեմ երազիդ մեկնութիւնը։ Ասա, հոգեղէն, ինչ ես տեսել։

ՓՐԷՑՏՈՒՄ

Ա՛յ քէ մատաղ. հենց էս գիշեր երազումս ինձ մի կնիկ տարաւ մի բախչայ. մի ծառից մի կարմիր խնձոր քաղեց տուեց թէ հոտ քաշի. համա բոլաղբս կրակ էր ընկել, էտ խընձորը ես քցեցի ըռեխս. հենց քցեցի թէ չէ՝ ընկայ մի տաք ծովի մէջ, ձէն տուեցի, էրվեցի, խորովուեցի, խեղդուեցի, օգնեցէք. ամա օգնող չեղաւ, ուզում էի խեղդուել, զարթնեցի, տեսայ տեղումս եմ. . . . . .

ՄԱԿԻ

«Տէր մի կորուսաներ զծառայս քո».— Հոգեղէն, շատ վատ երազ է։ Զորիր այժմ չորիր առաջիս. Մայիլ եղբայր, դու էլ չորիր կանգնած մնալը մեղք ա. երբ որ ես պէտք ա յայտնեմ (*Զորում եմ.*)։

ՄԱԿԻ

Այն կինը, որ դու տեսել ես, մայր Աս-

Հ.Հ.Հ. ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ.Գ.Ա. Публичная библиотека
7/I. 1922
Հանրային գրադարան
Հ.Հ.Հ. Ազգային գրադարան
1008/1008

տուածածինն է, (*Խաչակնքում եմ*) բիկ տարել է դրախտը ցոյց տուել։ Բայց սատանան ղրկել է քեզ։ Դու ուր էիր ցանկանում մեղաց պտուղը ուտել. դու պէտք ա արդար սըրտով հոտ քաշէիր այն խնկելի դրախտիցը. . . ծովը որ ընկել ես, դժոխքն ա. դու այսուհետև ողորմութիւն շատ տուր, աղքատներին օգնիր, ճգնաւորաց անունը սուրբ սրտով յիշիր. որ էլի արժանանաս դրախտին. եթէ ոչ, կընկնես դժոխքն—կայրվես, մինը մի պըտղունց ջուր չի տալ։ (*Երկրորդ անգամ էլ խաչակնքում եմ ու ձեռքերը տարածում*)։

ՄԱԿԻ

Դեռ այժմ վեր կացէք, հոգեղէն մարդիկ, իմ հրեշտակներին ես կ'խնդրեմ, որ ձեր մեղացը թողութիւն շնորհէ և արժանացուցէ ի տան Տեառն։

(*Կանգնում եմ*)։

ՓՐԷՑՏՈՒՄ

Լիս դառնաս, սուրբ ճգնաւոր, դրախտին արժանանաս։

ՄԱԿԻ

Օրհնեալ հոգեղէն, ինձ օրհնել է սուրբ ներանը, դու մի օրհնի, մեղք մի անիլ։

ՓՐԷՑՏՈՒՄ

Ոտդ յերեսիս դիր ճգնաւոր ջան, մեր տունն արի գնանք, մի հիւանդ երեխայ ու-

նիմ բալքի լաւացնես. քու ջափահախն էլ էս իմ աչքիս վրայ։

ՄԱՅԻԼ

Գնանք, հայր ճգնաւոր, տունը մօտիկ է։

ՄԱԿԻ

Շատ լաւ, գնանք, բայց էն օրհնեալ հարսներին ու կանանցը տանիցը դուրս արէք, որ ինձ չտեսնան. ես էլ նրանց չտեսնամ—«Տէր ուղղեա զդնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»։

ՄԱՅԻԼ

(*Քրէյտոռմին*) Սուրբ ա, սուրբ։

ՓՐԷՅՏՈՌՄ

Սուրբիցն էլ աւել ա Մայիլ ջան։

(*գնում է*)։

Վարագոյրն իջնում է։

Արարուած երկրորդ

Տեսիլ 1.

ՄՈՐԳԱՐ

Նզոված լինի դա, ինչ սուտ ճգնաւոր է. ինչ մեր տուն է եկել, միշտ բանս ձախ է գնում. ինչ բանի ձեռք եմ տալիս, անյաջող, վնաս կամ մի մեծ խայտառակութիւն է պատահում..։ Ինչ այդ անպիտան ճգնաւորը եկաւ մեր տուն, մի բանի օրից յետոյ մեր աղախինը՝ որ մի պարկեշտ կնիկ էր՝ էլ տանից դուրս գնաց. ասելով թէ՝ ես կվախեմ. ես էստեղ չեմ կենալ. մի օր էլ տանը մի բան կպատահի ինձ կմեղադրեն. կասեն դու ես գողացել, կոտրել, մեղաւորը դու ես։ Արի ու հօրս համոզի, ասա, որ՝ քո ճգնաւորն էլ դու ես, քո երկինքն էլ դու ես. քու սիրտն ու խիղճն էլ, ինչ կհասկացնես, խօսում եմ, բարկանում է, լռում եմ, լռելու բան չէ...։ Եղբայր ճգնաւոր ես, գնա ճգնաւորի տուն գտիր, էնտեղ կաց. գնա ճգնաւորի հետ ընկե-

րութիւն արա . . . էստեղ ճգնաւոր ոչոք չկայ տնաքանդ, քու պատճառով մեր թշնամիքն են շատանում։ Հայրս քեզ դուրս չի անում, դու էլ աներես ես, քեզ ու քեզ դուրս չես գնալ, հարիսայ ուտող Փիլոյի օյինը գլուխդ կբերեմ, մի լաւ վախացնեմ. յետոյ բոբիկ ոտքով էստեղից կփախչես, թեւաւոր կդառնաս, կ'թռչես . . . . թէ զորթ ճգնաւոր ես . . . . հենց էսօր էդ օյինը գլուխդ կբերեմ։ Գիտես ինչ օյին ա, էլ ինչ ասեմ, ես որ գիտեմ բաւական ա էլի. գնամ հօրս մի կերպ համոզեմ, կամ թէ չէ՝ հայրս էլ գայ ու իւր աչքովն տեսնի։ Գնամ շուտով . . . ։

2 տեսիլ

Մտնում է Մարգարը.

ՄԱՐԳԱՐ

Հայրիկ, ես քեզ չէմ ասում այդ անպիտան սուտ ճգնաւորին դուրս արա մեր տանից։

ՄԱՑԻԼ

Սուս, սուս, անպիտան, քու խելքն ինչ բանի ա հասնում։

ՄԱՐԳԱՐ

Ո՞ւմ խելքը. դու դեռ չես լսել, թէ դա ինչ բան է բերել աղբրում ժողոված հարսների գլխին։ Ամենքն էլ ասում են, խօսում են, մեզ անիծում են, որ դրան պահում ենք։

ՄԱՑԻԼ

Ձէնդ կտրի, սուս. սուտ են խօսում, դեռ չեն ճանաչում։

ՄԱՐԳԱՐ

Ո՞նց թէ չեն ճանաչում։ Ամեն այստեղից դուրս գնալիս՝ միշտ դէպի աղբիւրն է գնում ու խեղճ հարսներին վախացնում։ Այսօր էլ Աւետենց մեծ հարսին մենակ ճանկել է կաղնու ծառի տակին, ուզեցել է բռնի, նա ճվացել ա, մինչև խալխի հասնելը՝ դա պատովը ընկել է մեր պարտէզը, դուրս արա կորչի։

ՄԱՑԻԼ

Ի՞նչ է ասում։

ՄԱՐԳԱՐ

Ի՞նչ պէտք ա ասեմ. դա մի տեղ ճգնաւոր ա դառնում, մի ուրիշ տեղ վարժապետ, մի տեղ թաշճիութիւն է անում, մի ուրիշ տեղ աւազակութիւն, գլխարկդ գլխիցդ էնպէս կվերցնի, որ դու բան չես հասկանալ։ Ես կիր եմ կարդացել, բան գիտեմ, լաւին ու վատին ճանաչում եմ, ինձ լսիր, հայր։

ՄԱՑԻԼ

Այ տղայ, գիրն ասում ա ճգնաւորին մի հաւատալ։

ՄԱՐԳԱՐ

Աստած, երկինք, գետին, մօրս գերեզմանը վկայ, որ դա ճգնաւոր չի, ճգնաւորը անապատումը կը լինի։ Մեր տանն էլ կնիկ չկայ,

հարս չկայ, որ աչք պահի տան եղած չեղածի վրայ։ Դա երևում է որ մարդախաբ է, բաղդ փնտռող թափառականներից է. քեզ պէս միամիտ մարդի ա պատահել. ուզում է մեր տունն էլ հարամի. մի բան ճանկը գցի ու այնպէս դուրս կորչի, որ ոչ ով էլ չը տեսնի. . . . մեր օջախը հալալ ա հայր, հալալ օջախը անպիտան մարդի չի սիրիլ, դուրս արա կորչի։

ՄԱՑԻԼ

Տեր Աստուած, արի ու մի մոլորվի։ Այ տղայ, քո գլխումը խելք չկայ։

ՄԱՐԳԱՐ

Հայը, ես խելք ունիմ, ես ինձանից ստեր չեմ ստեղծում. ես ասում եմ այն, ինչ որ լսել եմ։ Աւետիսենց Պետրոսը ասում էր, որ ձեր տան սուտ ճգնաւորը մեր հարսին վախացրել է, Տանուտէրին գանգատ պէտք է անեմ, հօրդ դատաստանը անի, որ լիրբ մարդ է պահում, ինչի հարցնում չես, թէ դա անցաթուղթ ունի։

ՄԱՑԻԼ

Դա ումանից պէտք է անցաթուղթ ունենայ, հրեշտակներից, երկնքից, քարափից, քերծից, դա տանուտէր է ունեցել, որ անցաթուղթ առնէր այս կողմը գալիս։ Միւս անգամ իմ առաջին չիսոսես էդ մասին. մեր

գեղի խալխն էլ լուն ուխտ կշինեն, սուտը ղորթ կասեն, ղորթը սուտ, դուրս կորի, գնա բանիդ։

ՄԱՐԳԱՐ

Ես բան չունիմ, խաչագող աւազակին դուրս արա մեր տանից. խալխը սուտ չեն ասում. նրա շարժուածքից երևում է՝ որ մարդախաբ է, դու բան չես հասկանում։

ՄԱՑԻԼ

Դէ կորի, փուչ կենդանի։

ՄԱՐԳԱՐ

Ո՞ւր կորչեմ, ով կորչելու է, թող նա կորչի։

ՄԱՑԻԼ

Կորչելուն դուն ես. անպիտան, որ ոչ էն երկնքի թեաւոր լուսաթաթախ ճգնաւորից ես վախենում, ոչ էլ հօրդ խօսքը լսում։

ՄԱՐԳԱՐ

Ես ամեն բան լաւ եմ հասկանում ու ճանաչում. ինչու մի անգամ գեղամէջ չես դուրս գալիս, որ ամեն բան լսես։

ՄԱՑԻԼ

Գեղամիջում ինչ բան ունիմ, ես քեզ պէս աներես չեմ, որ օրուայ կէս մասը պարապ սարապ Նահապետենց կալումն անցկացնեմ։ Երթիկովս են ուզում, դրնովն եմ տալիս, դրոնովն են ուզում, երթիկովն եմ տալիս, հասկացար.

ՄԱՐԴԱՐ

Լաւ. վերջը կտեսնենք, ով է ճշմարիտ, ես թէ դու։

3 Տեսիլ

ՄԱՅԻԼ

(*Մի դռոը մտածելով.*) Կրակի մէջ եմ մնացել ապրէր. մարդ միանգամայն տղայ ունենայ, էն էլ էսպէս. . . լաւ, ա՛յ որդի. հենց մի սհաթ բու խօսքին դանք. յետոյ որ դրուստ ճգնաւոր լինի էդ մարդը, անիծի, նզովք անի իմ տան վերայ, էս գեղի վերայ, էլ մեր մինը երկու կդառնայ. . . . . Տ՛ռ, աշխարքումը սուտ ճգնաւոր կլինի. մարդ խալխի տունը քանդի ու ասի ես ճգնաւոր եմ, կլինի. մարդ ինձ ու բեզ խաբի, մեր ունեցածը գողանայ ու ասի թէ ես արդար եմ, կլինի. դէ ես սուտ, իմ տղէն զորթ, կլինի։ Մախլա՛ս, հիմիկուայ ջահիլները էլ ո՛չ ճգնաւորի են հաւատում, ո՛չ սրբի, ո՛չ հրեշտակի, ո՛չ էլ մեծի. մեծը խրատ է տալիս՝ ասում են միամիտ է, մեծացել խելքը կորցրել է. աշխարհ եկած ճգնաւորը իւր պաշտօնն է կատարում՝ ասում են մարդախաբ է. հիւանդը խաչիցն է բռնուած՝ չէ ասում են, խաչը մարդի ցաւ չի տալ. մեր ողորմածիկ Տէր Մարկոսը սրանից վեց տարի

առաջ ասում էր ուսումը լաւ բան է. Մարդարդը ինձ տուր կարդացնեմ. ես էլ լսեցի, իրան տուի կարդացրեց, գրի սև ու սպիտակը որպէս թէ չանց տուեց. որ յետոյ լաւ մարդ դառնայ՝ ինձ օգնի համա ինչ լաւ մարդ դառաւ, դէ մի գլուխդ բարձրացրու, տես Տէր Մարկոս, տես ինչ լաւ մարդ ա դառել է, որ ճգնաւոր մարդին սուտ ճգնաւոր ա ասում։ Ինձ հետ էլ հակառակվում։

Տեսիլ 4.

ՄԱԿԻ

«Զաստուած աղօթասերսն օրհնեսցէ և զբլսողս յիւրում արքայութեան յիշեսցէ»։

ՄԱՅԻԼ

(*Երեսը խաչակնքելով յետոյ*) Է՜յ, բամբասողներ, Աստուած ձեզ պատիժ կտայ, դուք չէք իմանալ. . . (*Ժողովրդին*)։

ՄԱԿԻ

Ի՞նչ է, հողեղէն մարդ, ով է բամբասում. . . . վնաս չունի, Քրիստոսին խաչեցին մեղաւորները, բայց Քրիստոսը ներեց նորանց մեղքը. Ես էլ նորա աչքերտն եմ. կներեմ. . .— թող զմեզս բամբասողաց, զի ո՛չ գիտեն՝ զի է ճգնաւոր և զի ինքեանք։

ՄԱՑԻԼ

Բա՛, գլուխդ, ոտքերդ շորերդ, կեղտոտ են, հայր ճգնաւոր, կթողնես որ լուալ տամ։

ՄԱԿԻ

Ո՛չ, ո՛չ, հողեղէն, թող որ կեխտերը ու որդերն ուտեն իմ հողային մարմինը, որովհետև քանի մարմինս տկարանայ, հոգիս կզօրանայ։

ՄԱՑԻԼ

Դու հանգիստ կաց, սիրտդ մի պղտորիլ. . . ես գնամ կերակրի պատրաստութիւն տեսնեմ. ես սոված եմ, դու էլ սոված կլինես։

ՄԱԿԻ

Ե՛րթ խաղաղութեամբ, Տէր ընդ քեզ։ (*Մայիլը դուրս է գնում*).

տեսիլ 5.

ՄԱԿԻ

(*Դէս ու դէն նայելուց յետոյ*). Ո՞վ հողեղէն մարդիկ, երևում է, որ ես երբեմն երբեմն ճգնաւորութեանս դաւաճանում եմ, ինչու լաւ չեմ ուսումնասիրում ճգնաւորութեանս սուրբ գաղտնիքները (*Վերցնելով մի բաժակ ու խոռոչիները դնելով*) տրդէն ժամանակս լրանում այս տանից հեռանալու. շուտով շուտով պէտք է տեղափոխուել, մի ուրիշ արդար տուն գտնել . . . (*ապա խոռոչների գլխին կանգնելով*) Ա՜յ խուր-

ջին, իմ ընկեր խուրջին. քո և իմ ընկերութեան կապն ու խորհուրդը ոչ ոք չէ կարող իմանալ. դու ինձանով սուրբ ես, իսկ ես ճգնաւորի անունով։ Մարդիկ այսպէս են ինձ ընդունում։ Դու գանգատվում ես որ փորդ մամոնայով լցրիր. բայց շուտով կհարստանամ, տասը հազարի տէր կդառնամ՝ էն ժամանակը՝ քեզ ոսկէ թելերով կզարդարեմ. ոսկէ տառերով կգրեմ վրէդ. ԳԱՂՏՆԱՊԱՀ ԽՈՒՐՋԻՆ. . .։

տեսիլ 6.

(*Թմիթմիից*)

ՄԱԿԻ

«Տէր լուր աղօթից իմոց, ունկնդիր բանից բերանոյ իմոյ . . .».

ԹԱՔՈՒԶ

(*Մտնելով*) Տան տէրը տանը չէ։

ՄԱԿԻ

(*Երևսին ձեռք դնելով*) Ո՛չ, բարի հողեղէն, ո՛չ, նա այստեղ չէ։

ԹԱՔՈՒԶ

Ես խօ հոգէառ հրեշտակ չեմ, որ երեսդ ծածկում ես։ Ես գիտեմ որ դու ամենքի հայրն ես (*մօտենում է ձեռքը հանդրելուս*)։

ՄԱԿԻ

(*Ձեռը փոխելով*) Ո՞վ ես, հարսն ես, աղջիկ ես, բարի հողեղէն։

ԹԱՔՈՒՉ

Տանտիրոջ ազգականն եմ։ Մարդս մեռաւ։

ՄԱԿԻ

Հոգին երկնից իջցէ ի վերայ չողչողուն պատկերիդ և հանգուցեալն արժանի համարեսցի յարքայութեան երկնից. ըստ ձեռն իմովք հրեշտակովք։

ԹԱՔՈՒՉ

Ես գրոց լեզու չգիտեմ, պարզ խօսա. ես անբաղդ եմ։

ՄԱԿԻ

Այո, սիրուն հարսիկ, ես կաղօթեմ, որ քո բաղդի դռները բացուին և միշտ մխիթարուած մնաս։ Մի ամաչիր հողեղէն, դու էլ արձակ խօսա, ուր ես եկել։

ԹԱՔՈՒՉ

Եկել եմ ինձ օրհնես, որ մի բաղդի տիրանամ։

ՄԱԿԻ

Այո, ես բաց կանեմ քո բաղդի փակուած դռները. բայց ասա ինձ սիրուն հարսիկ. վաղուց է որ հանգուցեալ մարդդ վախճանուել է։

ԹԱՔՈՒՉ

Ո՛չ, նոր է, մնացի առանց մարդ (*ցաւեղով*).

ՄԱԿԻ

(*Ցաւագեղով*) Մի մտածիլ, սիրուն հարսիկ. իմ հրեշտակների լուսաթաթախ թևերով՝ դու

նոր մարդ կունենաս, ու նորան աւելի կըսիրես, այնպէս չէ։

ԹԱՔՈՒՉ

Ես այժմ շատ եմ ուզում մարդ ունենալ։

ՄԱԿԻ

Այո, այո, դու դեռ կոկոն ես, դու դեռ վարդի փունջ ես. երևում է որ քո մէջ սէրը աւելի շատ կայ, քան թէ ուրիշների մէջ. բայց դու նորանցից էլ գեղեցիկ ես երևում։

ԹԱՔՈՒՉ

Ի՞նչ օգուտ գեղեցկութիւնից, որ ես հմի սնմարդ եմ։

ՄԱԿԻ

(*Առանձին*). Ի՞նչ սիրուն լեզու ունի այս հողեղէնը, ինչ գրաւիչ հասակ, կայտառ աչքեր. սիրուն հարսիկ մի մտածիլ, ես քեզ կօգնեմ։

ԹԱՔՈՒՉ

Աղաչում եմ ասա, ի՞նչպէս կօգնես ինձ ճար ու դարման կանես։

ՄԱԿԻ

Քեզ ճարը անճարը կանի. ով քեզ չունի՝ նա քո ճարն է. ում դու չունիս՝ դու նորա ճարն ես, սիրուն հարսիկ. . . .

ԹԱՔՈՒՉ

Գու ինձ չունիս, ուրեմն դու իմ հայրն ես։

ՄԱԿԻ

Այո, այո, շատ ճշմարիտ, սիրել զքեզ պէտք է։

ԹԱՔՈՒՉ

Բայց դու սուրբ ես։

ՄԱԿԻ

Սիրուն հարսիկ, կայ աշխարհումս և սրբութեամբ սէր, սիրեմ զքեզ և դու կսրբանաս (առանձին) ո՜հ, որքան բարի է, որքան շքնաղ է. (մտնենում է, աղջիկը յետ է գնում) (յետ դառնալով) «Տէր մի դարձուցաներ զերեսս քո յինէն. . . .»

ԹԱՔՈՒՉ

Ինձ համար էլ աղօթիր խնդրեմ։

ՄԱԿԻ

Ես անբաժան եմ, իմ բերանս մեղաւոր է, քոյ սուրբ բերանը ինձ համար բաց արա, սիրուն հարսիկ կարմրաթուշիկ։

ԹԱՔՈՒՉ

Սուս, սուս, գալիս են։

ՄԱԿԻ

(Իսկոյն) Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի. . .

ԹԱՔՈՒՉ

Լա՛ւ, լա՛ւ, քիչ աղօթք արա, ախր մեղք է։

ՄԱԿԻ

Սէրը սրբում է ամենայն մեղք, սիրուն հարսիկ, սիրեմ զքեզ, սիրեմ և դիս, տես ինչ սիրուն աչքեր են ծիծաղում դէմքիս. ինչ նազելի հասակ կանգնած առաջիս, իմ հրեշտակ սիրուն հարսիկ, հան հոգիս, հապա քոյ սիրոյ հրեշտակը ով է։

(Այս միջոցին Մայիլը մտնում է, եւ աչքը տեսնելով՝ յետ յետ է փախչում ու դիմացը տուայ կենում. շտում ամենայն ինչ՝ գլուխը, ձեռքը եւ փայտը շարժում).

ԹԱՔՈՒՉ

Թէ կարենաս մի տաղ ասես, իմն էլ դու կլինես։

ՄԱԿԻ

(Կուչ ու ձիք անելով) «Սիրուն հարսիկ,
Կարմիր թշիկ,
Ի՞նչ ես կանգնել,
Լռիկ մնջիկ. Տէր ես.

ԹԱՔՈՒՉ

Տէր չեմ, տէր չեմ. մի լաւ երգի, մի լաւ, հոգիդ սիրեմ։

ՄԱԿԻ

(Ըստ ձայնին «Թոզոտ են քո փեչերը,
«Մեր քաջ հայոց Կորչեն քեզնից փչերը,
զօրուդթիւն») Թոյլ տուր քո ծոցին նստամ,
Կարմիր թշիդ մամամ. Տէր ես.

ԹԱՔՈՒՉ

Սուս, սուս, սուս, եկան, տէր չեմ։

ՄԱԿԻ

Դիր տէր պահապան բերանոյ իմոյ . . .

ԹԱՔՈՒՉ

(*Մտիկ տալով դռանը եւ յետ դառնալով*)

Հա. յետոյ, ասա, ասա, ոչ ով չկայ։

ՄԱԿԻ

«Աչեր ունիս շատ նախշուն,
Թշեր ունիս շատ սիրուն,
Յօնքեր ունիս ոլորուն,
Մեղր ու կարաք քոյ լեզուն։ Տէր ես.

ԹԱՔՈՒՉ

(*Ծռի տալով*) մէկ էլ, մէկ էլ . .

ՄԱԿԻ

«Սիրուն ասենք սիրուն ջան,
(Ես ու դու ալ մարջան,
Երգնել (Ես տան փողը մեզ ընծայ,
Մեր սրտերը թող ցնծայ։ Տէր ես.

ԹԱՔՈՒՉ

Տէր չեմ, տէր չեմ։

ՄԱԿԻ

«Ամբողջ գիշեր միշտ անքուն,
Իրար սիրենք ես ու դուն,
Սիրեմ զքեզ, բայց թաքուն,
Մեծ վարձք կանես քու հոգուն. Տէր ես.

ԹԱՔՈՒՉ

Չէ, չէ, ինձ ինչ կտաս, որ տէր լինիմ։

ՄԱԿԻ

Այո, այո, ես քեզ արծաթեղէն կտամ, միայն փեշիդ տակին դիր (*ասելով հանում է խուրջինից բուդիկն, տալիս է իրան եւ ոգում է մօտենալ*)։

ԹԱՔՈՒՉ

Ոչ, ոչ, մէկն էլ տուր յետոյ։

ՄԱԿԻ

(*Խուրջինից վրաց հանելով*) ահա այս էլ լաւ գրչահատ է (*դարձեալ ոգում է մօտենալ*)։

ԹԱՔՈՒՉ

(*Դիմակը փոխած բարձր.*) Ա՜յ, դու անառակ, լիրբ մարդ, այս բոլորը դու մեր տանից ես գողացել։

ՄԱԿԻ

«Ասաց անզգամն. . . .»

ԹԱՔՈՒՉ

Ես տղայ եմ, տղայ, ես Մարգարն եմ, էլ որտեղ կարաս ազատուել իմ ձեռքից, աշխարհը քանդող քեօփակ. . . Հայը, թոկը բեր կապոտենք, ես որ քեզ ասում էի սա սուտ ճգնաւոր ա, չէիր հաւատում։

(*Մակին դողդողում է*).

ՄԱՅԻԼ

Լսեցի, սրդի, իմ աչքովը տեսայ։ Քաշ տուր տանենք գցենք հաւարունը. դատաստանը անենք. (*ինքն էլ միասին քաշ էն տալիս*)։

ՄԱԿԻ

Ո՞ւ իմ հրեշտակները։ Գաբրիել, Մուրէլ...

ԹԱՔՈՒՉ

Սուս, ձէնդ բեօփակ։

Վարագոյրն իջնում է

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ

Հանգուցեալ Աղեքսանդր Արարատեանի հեղինակած գրքերից ծախվում են այրի Շուշանիկ Արարատեանի մօտ հետևեալները՝

1. Երկու թումբ՝ գինն է. . . . . 25 կ.
2. Խղճութեան արգասիք . . . . . 15 կ.
3. Քնարիկ մանկական . . . . . 40 կ.
4. Լուսանման . . . . . 30 կ.
5. Գիւղական Խալիֆա . . . . . 50 կ.
6. Փնջիկ . . . . . 25 կ.
7. Հիմնարկութիւն գաւառ. ուսումն. . . 70 կ.
8. Սուտ հղնաւոր . . . . . 20 կ.

Ծախվում են բոլոր գրավաճառների և այրի Տ. Շ. Արարատեանի մօտ հետևեալ հասցէով՝ Фоминная улица д. № 15; Шушанику Араратянцъ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0330074

21.680